Ֆադեյ Սարգսյան

Տեխնիկական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, քաղաքական գործիչ, ինժեներական զորքերի գեներալ-մայոր

Ծնվել է 1923թ. Երևանում:

1940-1942թթ. սովորել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտում, անյուհետև Լենինգրադի Ս. Բուդյոննու անվան կապի ռազմական էլեկտրատեխնիկական ակադեմիաում: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին:

1946-1958թթ. աշխատել է ԽՍՀՄ պաշտպանության նախարարության հրթիռահրետանային գլխավոր վարչության գիտատեխնիկական կոմիտեում՝ վարելով մի շարք պատասխանատու պաշտոններ:

1958-1959թթ. եղել է ԽՍՀՄ պաշտպանության նախարարության ավագ ռազմական ներկայացուցիչը ռազմարդյունաբերական մի շարք գործարաններում, իսկ 1959-1963թթ.՝ ԽՍՀՄ ռադիոարդյունաբերության նախարարության Երեւանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում (ԵրՄՄԳՀԻ):

1963թ. նշանակվել է ԵրՄՄԳՀԻ գլխավոր ճարտարագետ, իսկ 1963-1977թթ.՝ տնօրեն:

1977-1989թթ. եղել է Հայկական ԽՍՀ նախարարների խորհրդի նախագահ: Ընտրվել է ԽՍՀՄ ու Հայկական ԽՍՀ ԳԽ, այնուհետև ՀՀ առաջին գումարման ԱԺ պատգամավոր:

1993-2006թթ. ղեկավարել է ՀՀ ԳԱԱ-ն: 2006 թ.-ից աշխատել է ՀՀ վարչապետի խորհրդական:

Պարգևատրվել է Սուրբ Մեսրոպ Մաշտոց շքանշանով, եկեղեցու Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ շքանշանով, նախկին ԽՍՀՄ բարձրագույն՝ Լենինի մեդալով, արժանացել Ուկրաինական ԽՍՀ պետական մրցանակնի:

Մահացել է 2010թ: